

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

«\_\_\_» \_\_\_\_\_ 2019 թվական

N \_\_\_-Ն

ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2003  
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 8-Ի N 205 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ  
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2003 թվականի հուլիսի 8-ի «Կազմակերպությունների (բացառությամբ բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների և արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց) դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի (պահուստաֆոնդի) ձևավորման, դեբիտորական ու կրեդիտորական պարտքերի անհուսալի ճանաչման և դուրսգրման կարգը հաստատելու մասին» N 205 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) որոշման 1-ին կետի՝

ա. 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) կազմակերպությունների դեբիտորական պարտքերի (բացառությամբ բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների և արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց, ջրօգտագործող հարկ վճարողների կողմից ոռոգման ջրի մատակարարման դիմաց ֆիզիկական անձանց մատվ առաջացած դեբիտորական պարտքերի, խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայություններ մատուցող հարկ վճարողների կողմից խմելու ջրի

մատակարարման և ջրահեռացման ծառայությունների դիմաց ֆիզիկական անձանց մասով առաջացած դեբիտորական պարտքերի, էլեկտրական էներգիայի առուվաճառք իրականացնող՝ էլեկտրական էներգիա բաշխող լիցենզավորված հարկ վճարողների կողմից էլեկտրաէներգիայի մատակարարման դիմաց անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց (այսուհետ՝ ֆիզիկական անձինք) մասով առաջացած դեբիտորական պարտքերի, բնական գազի առուվաճառք իրականացնող՝ բնական գազ բաշխող լիցենզավորված հարկ վճարողների կողմից բնական գազի մատակարարման դիմաց ֆիզիկական անձանց մասով առաջացած դեբիտորական պարտքերի, բնակչությանը մատուցվող ներտնային գազասպառման համակարգերի տեխնիկական սպասարկման դիմաց ֆիզիկական անձանց մասով առաջացած դեբիտորական պարտքերի) հնարավոր կորուստների պահուստի (պահուստաֆոնդի) ձևավորման, դեբիտորական ու կրեդիտորական պարտքերի անհուսալի ճանաչման և դուրսգրման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.»,

բ. 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայություններ մատուցող հարկ վճարողների կողմից խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների դիմաց ֆիզիկական անձանց մասով առաջացած դեբիտորական պարտքերի, էլեկտրական էներգիայի առուվաճառք իրականացնող՝ էլեկտրական էներգիա բաշխող լիցենզավորված հարկ վճարողների կողմից էլեկտրաէներգիայի մատակարարման դիմաց ֆիզիկական անձանց մասով առաջացած դեբիտորական պարտքերի, բնական գազի առուվաճառք իրականացնող՝ բնական գազ բաշխող լիցենզավորված հարկ վճարողների կողմից բնական գազի մատակարարման դիմաց ֆիզիկական անձանց մասով առաջացած դեբիտորական պարտքերի, բնակչությանը մատուցվող ներտնային գազասպառման համակարգերի տեխնիկական սպասարկման դիմաց ֆիզիկական անձանց մասով առաջացած դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի (պահուստաֆոնդի) ձևավորման, անհուսալի ճանաչման և դուրսգրման կարգը՝ համաձայն N 3 հավելվածի:»,

2) որոշմամբ հաստատված N 1 հավելվածի՝

ա. վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ (ԲԱՅԱՌՈՒԹՅԱՄԲ ԲԱՆԿԵՐԻ, ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԱՆՁԱՆՑ, ԶՐՕԳՏԱԳՈՐԾՈՂ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՌՈԳՄԱՆ ԶՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԴԻՄԱՑ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԱՍՈՎ ԱՌԱՋԱՅԱԾ ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ, ԽՄԵԼՈՒ ԶՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ԶՐԱՀԵՌՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՅՈՂ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԽՄԵԼՈՒ ԶՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ԶՐԱՀԵՌՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԱՍՈՎ ԱՌԱՋԱՅԱԾ ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ, ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔ ԻՐԱԿԱՆԱՅՆՈՂ՝ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱ ԲԱՇԽՈՂ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԴԻՄԱՑ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԱՍՈՎ ԱՌԱՋԱՅԱԾ ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ, ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔ ԻՐԱԿԱՆԱՅՆՈՂ՝ ԲՆԱԿԱՆ ԳԱԶ ԲԱՇԽՈՂ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԴԻՄԱՑ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԱՍՈՎ ԱՌԱՋԱՅԱԾ ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ ՄԱՏՈՒՅՎՈՂ ՆԵՐՏՆԱՅԻՆ ԳԱԶԱՍՊՈՒՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԴԻՄԱՑ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԱՍՈՎ ԱՌԱՋԱՅԱԾ ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ) ՀՆԱՐԱՎՈՐ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՊԱՀՈՒՍՏԻ (ՊԱՀՈՒՍՏԱՖՈՆԴԻ) ՁԵՎԱՎՈՐՄԱՆ, ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՈՒ ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ԱՆՀՈՒՍԱԼԻ ՃԱՆԱԶՄԱՆ ԵՎ ԴՈՒՐՍԳՐՄԱՆ ԿԱՐԳ»,

բ. 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Սույն կարգը տարածվում է շահութահարկ վճարող հանդիսացող կազմակերպությունների նկատմամբ (բացառությամբ բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների և արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց, ջրօգտագործող հարկ վճարողների կողմից ոռոգման ջրի մատակարարման դիմաց ֆիզիկական անձանց մասով առաջացած դեբիտորական պարտքերի, խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայություններ մատուցող հարկ վճարողների կողմից խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների դիմաց ֆիզիկական անձանց մասով առաջացած դեբիտորական

պարտքերի, էլեկտրական էներգիայի առուվաճառք իրականացնող՝ էլեկտրական էներգիա բաշխող լիցենզավորված հարկ վճարողների կողմից էլեկտրաէներգիայի մատակարարման դիմաց ֆիզիկական անձանց մասով առաջացած դեբիտորական պարտքերի, բնական գազի առուվաճառք իրականացնող՝ բնական գազ բաշխող լիցենզավորված հարկ վճարողների կողմից բնական գազի մատակարարման դիմաց ֆիզիկական անձանց մասով առաջացած դեբիտորական պարտքերի, բնակչությանը մատուցվող ներտնային գազասպառման համակարգերի տեխնիկական սպասարկման դիմաց ֆիզիկական անձանց մասով առաջացած դեբիտորական պարտքերի) այլ անձանց հետ պայմանագրերից, աշխատանքային հարաբերությունները կարգավորող օրենսդրությունից, վնաս պատճառելու հետևանքով կամ օրենքով նախատեսված այլ հիմքերով առաջացած պարտավորությունների (այսուհետ՝ դեբիտորական կամ կրեդիտորական պարտքեր) վրա:»,

գ. 4-րդ կետի երկրորդ պարբերությունում «Ժամկետը» բառից հետո լրացնել «մինչև դրանց անհուսալի դառնալու հաշվետու տարվա ավարտը» բառերը,

դ. 4-րդ կետի երրորդ պարբերությունից հանել «, ինչպես նաև ցպահանջ դեբիտորական կամ կրեդիտորական պարտքերի դեպքում» բառերը,

ե. 4-րդ կետում երրորդ պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«Ցպահանջ դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է պահանջ ներկայացնելու օրվանից, բայց գործարքի կատարմանը հաջորդող 61-րդ օրվանից ոչ ուշ:»,

զ. 4-րդ կետի չորրորդ պարբերությունում «գործառնություններից» բառից հետո լրացնել «, փաստերից» բառը,

է. 9-րդ կետում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

«Անհուսալի ճանաչված և դուրս գրված դեբիտորական կամ կրեդիտորական պարտքերի գծով դուրսգրումից հետո հաշվարկված տույժերը, տուգանքները կամ տոկոսներն անհուսալի են ճանաչվում և դուրս են գրվում դրանց առաջացման հաշվետու տարում:»,

ը. 14-րդ կետի «ա» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ա/ կետանցված դառնալու 366-րդ օրվանից, եթե դեբիտորի պարտքի ընդհանուր գումարը կազմակերպությանը չի գերազանցում 100 հազար դրամը կամ դեբիտորական պարտքի գումարը բռնագանձելու պահանջը բավարարելու կամ մերժելու վերաբերյալ դատական ակտի (վճռի, որոշման կամ կարգադրության, բացառությամբ դեբիտորական պարտքի գումարը ներելու կամ այն որևէ հիմքով չպահանջելու վերաբերյալ կայացված վճռի, որոշման կամ կարգադրության) օրինական ուժի մեջ մտնելու օրվանից, եթե տվյալ դեբիտորի պարտքի ընդհանուր գումարը գերազանցում է 100 հազար դրամը.»»,

թ. 14-րդ կետի «բ» ենթակետում «լուծարվելու» բառից հետո լրացնել «կամ պետական հաշվառումից հանված պարտապան անհատ ձեռնարկատիրոջ» բառերը,

ժ. 17-րդ կետում «լուծարման,» բառից հետո լրացնել «կամ պարտապան անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառումից հանվելու,» բառերը, իսկ «նվազեցում» բառից առաջ՝ «այլ» բառը,

ժա. 24-րդ կետում «նվիրված» բառը փոխարինել «ներված կամ չպահանջված» բառերով և լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

«Սույն կետի կիրառության իմաստով՝ համարվում է, որ առկա է այլ ձևով կրեդիտորական պարտքը չպահանջելու վերաբերյալ պարտատիրոջ որոշում և (կամ) համաձայնություն, եթե կրեդիտորական պարտքի առաջացմանը հաջորդող երեք հարկային տարիների ընթացքում պարտատերը պարտքի կատարումն ապահովելու պահանջով չի դիմել դատարան:»,

ժբ. 26-րդ կետը և տեղեկանքն ուժը կորցրած ճանաչել,

3) որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 9-րդ կետում, N 2 հավելվածի 7-րդ կետում և N 3 հավելվածի 6-րդ կետում «դրանց գծով» բառերից հետո լրացնել «դուրսգրման պահին» բառերը,

4) որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 7-րդ կետում «տույժեր» բառից առաջ լրացնել «տոկոսներ,» բառը և լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

«Անհուսալի ճանաչված և դուրս գրված դեբիտորական պարտքերի գծով դուրսգրումից հետո հաշվարկված տույժերը, տուգանքները կամ տոկոսներն անհուսալի են ճանաչվում և դուրս են գրվում դրանց առաջացման հաշվետու տարում:»,

5) որոշմամբ հաստատված N 3 հավելվածի՝

ա. վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԽՄԵԼՈՒ ԶՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ԶՐԱՀԵՌԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՅՈՂ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԽՄԵԼՈՒ ԶՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ԶՐԱՀԵՌԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԱՍՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԴԵՔԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ, ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ՝ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱ ԲԱՇԽՈՂ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԴԻՄԱՑ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԱՍՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԴԵՔԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ, ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ՝ ԲՆԱԿԱՆ ԳԱԶ ԲԱՇԽՈՂ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԴԻՄԱՑ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԱՍՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԴԵՔԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ ՄԱՏՈՒՅՎՈՂ ՆԵՐՏՆԱՅԻՆ ԳԱԶԱՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԴԻՄԱՑ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԱՍՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԴԵՔԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՊԱՀՈՒՍՏԻ (ՊԱՀՈՒՍՏԱՖՈՆԴԻ) ՁԵՎԱՎՈՐՄԱՆ, ԱՆՀՈՒՍԱԼԻ ՃԱՆԱԶՄԱՆ ԵՎ ԴՈՒՐՍԳՐՄԱՆ ԿԱՐԳ»,

բ. 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Սույն կարգով կարգավորվում են խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայություններ մատուցող հարկ վճարողների կողմից խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների դիմաց ֆիզիկական անձանց մասով առաջացած դեբիտորական պարտքերի, էլեկտրական էներգիայի առուվաճառք իրականացնող՝ էլեկտրական էներգիա բաշխող լիցենզավորված հարկ վճարողների կողմից էլեկտրաէներգիայի մատակարարման դիմաց ֆիզիկական անձանց մասով առաջացած դեբիտորական պարտքերի, բնական գազի առուվաճառք իրականացնող՝ բնական գազ բաշխող լիցենզավորված հարկ վճարողների կողմից բնական գազի մատակարարման դիմաց ֆիզիկական անձանց մասով առաջացած դեբիտորական պարտքերի, բնակչությանը մատուցվող ներտնային գազասպառման համակարգերի տեխնիկական սպասարկման դիմաց (այսուհետ սույն կարգի իմաստով՝ հանրային ծառայություններ) ֆիզիկական անձանց մասով առաջացած դեբիտորական պարտքերի

հնարավոր կորուստների պահուստի (պահուստաֆոնդի) ձևավորման, անհուսալի ճանաչման և դուրսգրման կարգի հետ կապված հարաբերությունները:»,

գ. 2-րդ կետում «շահութահարկ վճարող էլեկտրաէներգիա բաշխող ընկերությունների նկատմամբ էլեկտրաէներգիայի մատակարարման» բառերը փոխարինել «հանրային ծառայություններ մատուցող շահութահարկ վճարողների նկատմամբ հանրային ծառայությունների» բառերով,

դ. 3-րդ կետում «էլեկտրաէներգիա բաշխող ընկերություններին՝ էլեկտրաէներգիայի մատակարարման» բառերը փոխարինել «հանրային ծառայություններ մատուցող շահութահարկ վճարողների հանրային ծառայությունների» բառերով,

ե. 4-րդ կետում «էլեկտրաէներգիայի մատակարարման» բառերը փոխարինել «հանրային ծառայությունների մատուցման» բառերով,

զ. 6-րդ կետում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

«Անհուսալի ճանաչված և դուրս գրված դեբիտորական պարտքերի գծով դուրսգրումից հետո հաշվարկված տույժերը, տուգանքները կամ տոկոսներն անհուսալի են ճանաչվում և դուրս են գրվում դրանց առաջացման հաշվետու տարում:»,

է. 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. Հանրային ծառայություններ մատուցող շահութահարկ վճարողը դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստ (պահուստաֆոնդ) ձևավորելու դեպքում պահուստին (պահուստաֆոնդին) մասհանումներ կարող է կատարել միայն կետանցված դեբիտորական այն պարտքերի համար, որոնք առաջացել են հանրային ծառայությունների մատուցման դիմաց:»,

ը. 8-րդ կետի աղյուսակի վերջին տողը հանել,

թ. 11-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) հաշվետու տարվա ավարտի ամսաթվից հետո հաշված վերջին 366 անընդմեջ օրերի ընթացքում դեբիտորի կողմից չի կատարվել նախորդ տարվա ընթացքում կետանցված դեբիտորական պարտքի դիմաց որևէ վճարում (մարում) և հանրային ծառայություն մատուցող շահութահարկ վճարողի կողմից դեբիտորին չի մատուցվել հանրային ծառայություն.»,

ժ. 11-րդ կետի 2-րդ ենթակետում «կարգադրություն» բառից հետո լրացնել «, բացառությամբ դեբիտորական պարտքի գումարը ներելու կամ այն որևէ հիմքով չպահանջելու վերաբերյալ կայացված վճռի, որոշման կամ կարգադրության» բառերը,

ժա. 15-րդ կետում «էլեկտրաէներգիա բաշխող ընկերությունների» բառերը փոխարինել «հանրային ծառայություններ մատուցող հարկ վճարողների» բառերով, իսկ «լրանալը» բառից հետո լրացնել «, շահութահարկ վճարողի լուծարման պահին հանրային ծառայությունների մատուցումից առաջացած դեբիտորական պարտքերը չպահանջելու վերաբերյալ որոշման ընդունումը» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և տարածվում է 2019 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա, բացառությամբ սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի «ժբ» պարբերության, որի գործողությունը տարածվում է 2020 թվականի հաշվետու տարվա և հետագա հաշվետու տարիների վրա:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Բ. ՍԱՀԱԿՅԱՆ**